Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
P-88

Переплетно-Галантерейная
мастерская
Е. Я. Гель-Аронович
Чаплинская ул. № 6.

6 NOV 2011
891.99
Թ-88
Ամ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

№ 9097.

ՆՈՒԱԳՆԵՐ

1001/1691
ՀԱՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
«С.С.Р.Հ Публичная Библиотека»
7/XI-1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
БИБЛИОТЕКА ТИФЛИССКАГО СОБРАНІЯ

Թիֆլիս
Տպարան Ա. Քուլթաթելաձէի, Նիկ. փ., № 21
1902

19 APR 2013

31982

Дозволено цензурою, С.-Петербургъ.
7-го Іюня 1902 г.

ՆՈՒԱԳՆԵՐ

*
* *

Օ՜, խնդրում եմ, մի՛ նորոգիր
Իմ մրմնջող վերքերը.
Մի՛ յիշեցնիր սիրոյ նախկին,
Երգուած ու հին երգերը։

Մի՛ հմայիր ինձ երկնային
Գոհարափայլ աչքերով.
Մի՛ կաշկանդիր ուշք ու միտքս
Քո հիասքանչ պատկերով։

Առանց քեզ էլ ես ցաւ ունիմ,
Ես վիշտ ունիմ բիւրաւոր.
Առանց քեզ էլ կուրծքս տկար,
Արիւնոտ է, վիրաւոր։

Ես քնչ սրտով սէրըդ երգեմ,
Երբ եղբայրս հարազատ
Տառապում է անօգնական,
Դառը լալիս յուսահատ...

---

*
* *

Քեզ ինչ օգուտ, երբ քո սիրուց
Ես հառաչեմ վշտաբեկ.
Քեզ ինչ հաճոյք, երբ դառնագին
Տանջւեմ գիշեր ու ցերեկ։

Իմ երգով ես գուցէ ուզում
Գեղութիւնդ հռչակել.
Իմ վերքով ես գուցէ ուզում
Փառք ու անուն վաստակել։

Մի՞թէ թշւառ բանաստեղծի
Ցաւոտ սրտի տանջանքը
Պիտի լինի գեղեցկուհու
Անգութ սրտի պարծանքը։

Աղաչում եմ, դու մի լինիր
Այդքան անգութ սնափառ.
Իմ քնարի հնչիւնները
Խաղալիք չեն քեզ համար։

---

*
* *

Բանաստեղծը պիտի լինի
Ժողովրդի թարգմանը.
Բանաստեղծը պիտի լինի
Հայրենիքի պատգամը։

Վշտի ժամին իր ազգի հետ
Նա դառնագին պիտի լայ.
Իսկ երջանիկ բոպէներին
Պիտի ուրախ նա ժպտայ։

Օ՜ ինչ ծաղր, օ ինչ ծանակ
Պիտի նիւթեմ ինձ համար,
Թէ մոռանամ ժողովուրդս,
Սէրըդ երգեմ վշտահար։

Բաւական է. գեղութեամբդ
Ինձ մի անիր նըշաւակ.
Գեղութեամբդ ինձ մի դարձնիր
Հայրենիքի խորթ զաւակ։

---

*
* *

Արդեօք ինչ փոյթ ուրիշներին,
Եթէ որ քեզ ես սիրեմ.
Ումըն ինչ գործ, ազգին ինչ շահ.
Եթէ սրտիդ ես տիրեմ։

Ումըն ինչ գործ՝ թէ չքնաղ է
Սրտիս սիրած իմ փերին.
Մթթէ մարդիկ կարօտ են իմ
Սիրոյ ունայն երգերին։

Առանց այն էլ մեր աշխարհը
Սիրոյ երգով հեղեղուած՝
Սիրահարի արցունքներով
Ողողուած է ու ցօղուած։

Արմենիայի բուրաստանում
Էլ ոչ մի հատ վարդ չը կայ,
Որ սոխակի տանջանքներին
Եղած չ'ըլնի լուռ վկայ։

*
* *

Ինչպէս որ իմ անուշ վարդը
Ծաղկանց միջից քաղուած է,
Այնպէս էլ իմ սրտի սէրը
Արդէն վաղուց թաղուած է։

Երբ բոցավառ, մեծ հրդեհից
Սիրտս այրուեց, խորտակուեց—
Փլատակների, մոխրի տակին
Սէրըս հանգաւ ու թաղուեց։

Դու, հընախոյզ գեղեցկուհի,
Ի՞նչ ես պտրում իմ սրտում.
Աւեր սրտիս փլատակները
Է՞ր ես նորից դու քանդում։

Երկարատև պեղումներից
Օ՜ մի գուցէ սրտիս մէջ՝
Մոխրի տակին՝ գտնես յանկարծ
Սիրոյ մի կայծ դու անշէջ...

*
* *

Մարգարէ չեմ—գուշակում եմ՝
Խաղ ես խաղում դու ինձ հետ՝
Դու ուզում ես սիրտը վառես,
Որ ծիծաղես այնուհետ.

Որ հրճւանքով նայես հեռւից
Սրտիս բուռը հրդեհին,
Որ ինքնագոհ ու բաւական
Նայես թշւառ քո զոհին։

Օ՜, մի լինիր Ներոնի պէս
Զարախնդաց ու դաժան.
Գեղեցկուհուն չարութիւնը
Ոչ վայել է, ոչ արժան։

—

*
* *

Աղաչում եմ, օ խնդրում եմ,
Հեռու գնա իմ սրտից.
Քո գեղութեան ես նայելով՝
Սարսափում եմ սև մտքից։

Թէ իմ սրտում գտնես մի կայծ
Եւ դու նորան բորբոքես.
Թէ իմ սրտում վաղուց հանգած
Մեծ հրդեհը նորոգես.

Այն ժամանակ թող իմ սիրտը
Հոսեն բոլոր ծովերը.
Թող իմ սիրտը հոսեն բոլոր
Ովկիանի ջրերը։

—

*
* *

Մի հըրաշքով թէ յարութիւն
Առնի մեռած իմ սէրը,
Եւ ցաւերիս վերայ բարձրեն
Իմ նոր սիրոյ ցաւերը,—

Այն ժամանակ դու իմացիր,
Որ կորած եմ յաւիտեան.
Այն ժամանակ դու ինձ համար
Ասա փորեն գերեզման։

Մենք երկուսով՝ սէրիս ու ես՝
Հողագնդի երեսին
Չենք կարող մեր գոյութիւնը
Պահպանելու միասին։

Սէրիս հզօր, դժնդակ է,
Սարսափելի՜, ահաւոր.
Իսկ ես—տկար և ուժասպառ,
Վշտից յոգնած ու անզօր։

---

*
* *

Մի զարմանար, եթէ ընկճեմ
Թոյլ եղէգի ես նման,
Բուռն սիրոյ փոթորիկից
Իջնեմ սառը գերեզման։

Քեզնից առաջ շատերի՜ն եմ
Սիրել, իբրև խելագար.
Քեզնից առաջ շատ անգամ է
Տանջուել սիրոյս ցաւագար։

Բայց այս անգամ կը մահանամ
Սիրոյ դառն տանջանքից,
Որովհետև վարդերի մէջ
Դու չքնաղ ես ամենքից։

Ա՜խ, երանի՜ դու լինէիր
Մի ալլանդակ արարած.
Ա՜խ, երանի դու լինէիր
Վայրի ծաղիկ թառամած...

---

*
* *

Դուք, անօթի, անտուն, անտեր,
Անօգնական եղբայրներ.
Դուք, մութ բանտի սոված, ծարաւ
Շղթայակապ գերիներ.

Դուք, տարաբաղդ ամուսնութեան
Թշուառ զոհեր ողբալի.
Դուք, գահավէժ, բաղդակորոյս,
Հէգ իշխաններ վշտալի.

Դուք, որդեզուրկ, լալահառաչ,
Անմխիթար ծնողներ.
Դուք, աշխարհի բոլոր դժբաղդ,
Յուսահատուած սգաւորներ—

Ձեր վշտերը, ձեր ցաւերը
Եթէ ձուլէք միասին,
Ձեզ հաւասար լինել նոքա
Վշտիս փոքրիկ մի մասին։

---

*
* *

Նա, որին մենք նէ ենք ասում
Ու խոնարհւում առաջին.
Նա, որ երբէք չէ ունկընդիր
Բանաստեղծի հառաչին—

Անգթութեամբ մտաւ սիրտս,
Շարժեց նորա թելերը,
Ձգնաղութեամբ ինձ հրմալեց,
Վառեց նախկին իմ սերը...

Դուք, տարաբաղդ սիրահարներ,
Եկէք կազմենք հանուր սուգ.
Եկէք ողբանք ի միասին,
Թափենք ապի արտասուք։

Մեր բոլորի ցաւը մէկ է,
Օ՜ եղբայրներ վշտահար.
Եկէք սփոփենք, եկէք սիրտ տանք,
Մխիթարենք մենք իրար։

---

*
* *

Երբ լուսինը գեղածիծաղ՝
Ամպերի մէջ լողալով՝
Հանդարտ ու վեհ ընթանում էր,
Արծաթի պէս շողալով,—

Պատշգամբում, գետի ափին,
Նստած էինք երկուսով։
Ոչ ոք չը կար։ Գեղ լուսնեակն էր
Միայն ներկայ իր լուսով։

Դու հիացած՝ ուրախ, զըւարթ՝
Նայում էիր երկնքին.
Իսկ ես տխուր՝ նայում էի
Հրեշտակային քո դէմքին։

Եւ այդ դառն տանջանքներիս
Խորհրդաւոր գիշերը
Ուզում էի մի վարդ քաղել,
Բայց ծակեցին փշերը...

---

*
* *

Գեղեցկուհի, բառ եմ ուզում—
Բառարանում բառ չը կայ.
Զքնաղ փերի, տառ եմ ուզում—
Տպարանում տառ չը կայ։

Օ՜, խնդրում եմ, բառեր տուէք—
Պատմեմ անհուն իմ սէրը.
Աղաչում եմ, տառեր տուէք—
Տպեն սիրոյս վէպերը։

Սէրըս անզուսպ, սէրըս բուռն,
Սէրըս մեծ է ու հսկայ.
Նորա տխուր պատմութեանը,
Նորա վէպին վերջ չը կայ։

Թէ վիթխարի, սէգ լեռները
Թղթերի կոյտ դառնային,
Իսկ ծովերի ջուրը՝ մելան—
Զէին բաւիլ իմ վէպին։

---

*
* *

Երբ ժպտում էր ուրախ, զարթ
Գեղ գարունը կենսատու—
Շուշաններին, վարդերի մէջ
Կանգնած էինք ես ու դու։

Նախշուն հաւքի երամները
Ճախրում էին, երգ տալիս.
Բիւրեղափայլ առուակները
Հոսում էին ու խօսում։

Դու փնջեցիր անուշաբոյր
Ծաղիկները խնդալով
Ու նայեցիր մելամաղձոտ
Իմ երեսին ժպտալով։

«Ծաղիկներից օրն ես սիրում»,
Հարցրիր դու ինձ մեղմ ու հեզ։
Պատասխանես այսպէս տրի.
—Ես սիրում եմ միայն քեզ...

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
ԵՐԵՎԱՆ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1991/1691

Տիկինները, օրիորդները՝
Զուգուած վերջին տարազով՝
Խնջոյքի մէջ նստած էին
Գեղաժպիտ ու նազով։

Շուրջը կերպաս, դիպլայ, թաւիշ,
Պէս-պէս ըզգեստ ու հովհար.
Շուրջը ծաղիկ, անուշ բուրմունք,
Թարմութիւններ ու գոհար։

Ղամբարափայլ դահլիճի մէջ
Կեանքը եռում, թնդում էր.
Ամենայն մարդ շուք ու փայլից
Ուրախանում, խնդում էր։

Բայց երբ յանկարծ դու ներս մտար -
Ամենքը քեզ նայեցին,
Նախանձելով քո գեղութեան՝
Ախ քաշեցին, լռեցին...

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

*
* *

Թող թառամեն բուրաստանի
Շուշանները, վարդերը.
Թող չըքանան գարնանային
Ըսքանչելի գարդերը։

Ես վարդ ունիմ, ես զարդ ունիմ,
Ծաղիկ ունիմ նոր ծաղկած—
Նախշուն, սիրուն, ծաղկափթիթ
Գարուն ունիմ նոր բացուած։

Զքնաղ փերիս, անգութ հիւրիս
Վարդ ու զարդ է ինձ համար.
Իմ նուշ-եարը, իմ փուշ-եարը
Ալ ծաղիկ է ինձ համար։

*
* *

Օ՜, երկնքի մռայլ ամպեր,
Կուտակուեցէք միասին,
Սփռէք մթին ձեր սև քօղը,
Ծածկէք արև ու լուսին։

Մըռայլեցրէք դուք շողշողուն,
Վառ աստղերը բիւրաւոր,
Մըռայլեցրէք դուք երկնային
Կանթեղները լուսաւոր։

Թող ամեն տեղ թագաւորի
Սկզբնական խաւարը.
Թող մշուշը քաօսական
Պատի ամբողջ աշխարհը—

Գեղեցկուհուս դէմքի փայլը
Բաւական է աշխարհքին.
Նորա պայծառ, հուր-աչերը
Բաւական են երկնքին։

*
* *

Երնէկ կուրծքըս մի լեառ լինէր,
Իսկ դու՝ մի ամպ երկնային,
Որ լողալով՝ գաս վերևից,
Փարուես կարօտ իմ կրծքին։

Երնէկ կուրծքըս երկինք լինէր,
Իսկ դու՝ պայծառ, վառ աստղիկ,
Որ շողալով կրծքիս վերայ,
Լինես սրտիս դու մօտիկ։

Երնէկ կուծքըս ծաղկոց լինէր,
Իսկ դու բացուած, անուշ վարդ,
Որ իմ կրծքին խոնարհուելով՝
Հանգիստ առնես դու հանդարտ։

Երնէկ սիրտըս մի ծով լինէր
Իսկ դու մի ջինջ, յստակ գետ,
Որ հոսելով՝ գաս, միանաս,
Խառնուես կարօտ սրտիս հետ...

---

*
* *

Իմ հարազատ, հէգ եղբայրը
Հառաչում էր ու լալիս,
Յուսահատուած հեկեկում էր,
Թշուառ գլխին վայ տալիս։

Նորա դառը տանջանքներից
Սիրտըս ցաւեց ու այրուեց.
Նորա ողբից լոյս երկինքը
Գլխիս մթնեց, խաւարեց։

Քեզ խնդրեցի, չքնաղ փերի,
Որ վշտերըս ամոքես.
Աղաչեցի, որ քո սիրով
Իմ ցաւերը ըսփոփես։

Բայց, օ անգութ, դու մնացիր
Լեռ քարի պէս անտարբեր.
Սառնութեամբդ ցաւիս վերայ
Աւելացրիր նոր ցաւեր։

---

*
* *

Ա՜խ, մինչև ե՞րբ թողնես դու ինձ
Այսպէս հիւանդ ու տանջված.
Ա՜խ, ե՞րբ պիտի խղճաս դու ինձ,
Բուժես սիրտըս խոցոտված։

Դու ծաղկել ես, դու բացուել ես,
Դու ալ վարդ ես աննման.
Անուշակ ես, մանուշակ ես,
Դու շուշան ես ու ռէհան։

Բացված վարդըն ու ծաղիկը
Պիտի սիրուի, փայփայուի.
Պիտի նա իր սիրահարի
Կրծքին դգուի ու փարուի։

Թէ որ պիտի ինձ թողնէիր
Այսպէս կարօտ ու այրված,
Էլ ո՞ւմ համար դու ծաղկեցիր
Ու բացուեցիր, անա՛սուած։

---

*
* *

Արեգակի ջերմութիւնից
Սառուցները հալուում են
Եւ դժնդակ ձմերային
Ցուրտ օրերը անցնում են։

Թէ մօտ լինեն մեր սրտերը
Եւ իրար հետ միացած –
Ջերմութիւնից կը տաքանայ
Քո սիրտը պաղ ու սառած։

Ինչպէս գարնան տաք արևից
Արթնանում է անտառը,
Արթնանում է ձմրան քնից
Սառած, թմրած աշխարհը.—

Այնպէս էլ քո սրտի սէրը
Խորը քնից կ՚արթնանայ,
Եթէ քո պաղ, սառը սիրտը
Ջերմ սրտիս հետ միանայ։

---

*
* *

Այն օրուանից, երբ քո փայլուն,
Հուր-աչերի նետերը
Թափանցեցին իմ յոգնատանջ,
Տկար սրտի խորքերը —

Իմ արիւնոտ կրծքի միջին
Խորունկ վէրքեր բացուեցին.
Բայց վէրքերդս մինչև օրդս
Անբուժելի մնացին։

Եւ կը մնան նոքա անբոյժ
Մինչև սառը գերեզման.
Հողի տակին յաւէրժական
Նինջը կ'ըլնի ինձ դարման։

Երբ կը ննջեմ, օ՛ մի զուցէ
Շերմիս մօտով դու անցնես
Եւ ըզգեստիդ անուշ ձայնով
Նորից դու ինձ արթնացնես...

---

*
* *

«Ասա՛, պօէտ, — հարցնում են ինձ.
Իրաւ՝ ունիս դու փերի,
Թէ լոկ ունայն երգում ես դու՝
Առանց սրտի լարերի»։

—Մթէ ծովը առանց հողմի
Կը փոթորկի ու կ'եռայ.
Մթէ երկինք առանց ամպի
Կը դղրդայ, կը գոռայ։

Առանց յոյզի, առանց վշտի
Մթէ արցունք կը հոսի.
Առանց լեզուի ու բարբառի
Մթէ մարդս կը խօսի։

Մթէ առանց արեգակի
Կը տաքանայ աշխարհը.
Մթէ կ'երգի առանց լարի
Բանաստեղծի քնարը։

*
* *

„Բաւական է. լռիր, երգիչ,—
Ասաց ինձ իմ ընկերը.
Քանի՞ տանջւես, քանի՞ ողբաս,
Թող քո սիրոյ երգերը։

„Քո սառնասիրտ գեղեցկուհուց
Օգուտ չունես դու իսպառ.
Դու աշխատիր վաստակելու
Ոսկի, արծաթ ու գոհար։

«Հարստութեան մէջ կը գտնես
Սրտիդ միակ ըսփոփանք.
Միայն փողի մէջ կը գտնես
Մխիթարանք ու բերկրանք...»

—Անմիտ ընկեր, մի՞թէ փերիս
Հարուստ գանձ չէ ինձ համար.
Մի՞թէ նորա հուր-աչերը
Անգին քար չեն ու գոհար։

---

*
* *

Թէպէտ երգը բարձրալուր է,
Հանրահռչակ ու յայտնի,
Բայց երգիս մէջ իմ դեցուհին
Սքօղված է ու գաղտնի։

Գեղեցկուհի ծանօթները
Լսում են իմ երգերը,
Կասկածանքով ու մտատանջ
Կարդում սիրոյս վէպերը։

Եւ ամեն մի գեղեցկուհի
Անց՞է կացնում իր մտքով՝
Զը լինի՞ թէ բանաստեղծը
Ինձ է երգում իր երգով։

Իսկ դու, անգութ, դու, քարասիրտ,
Ոչ իմ երգը հասկացար,
Ոչ մտքովդ դու անց կացրիր,
Որ երգում եմ քեզ համար։

***

Կուրծքիս մաշող, սիրտիս այրող
Սիրոյ հուրը բորբոքուած
Միայն սառը հողի տակին
Կ'ըլնի մարած ու հանգած։

Եւ երբ սիրտիս՝ շիրմիս նման՝
Կը պաղի իմ մահից յետ,
Քո անտարբեր, սառը սիրտը
Գուցէ վառուի այնուհետ։

Այն ժամանակ լալահառաչ՝
Գուցէ շիրմիս մօտենաս,
Ջերմ արցունքով իմ աճիւնը
Ողողես ու լըւանաս։

Եւ յուսահատ գուցէ ասես.
„Օ՜, Յարութիւն, Յարութիւն,
Երանի՜ թէ գերեզմանից
Ելնես, առնես յարութիւն...“

***

Մռայլ, խաւար ամպերը չեն
Ջինջ երկինքը մթնացնում.
Այդ անողոք, դառը վիշտն է
Տանջուած սիրտիս սևացնում։

Մութ, ամպամած երկինքը չէ
Բարձր թնդում, որոտում.
Այդ սիրատանջ, յուզուած սիրտս է
Անվերջ տրոփում, բաբախում։

Հողմասասան ու փրփրադէզ
Ծովերը չեն փոթորկւում.
Այդ ալեկոծ, սիրաբորբոք
Իմ վառ սիրտն է բորբոքւում։

Արաքսը չէ յորձանք տալով՝
Իր ափերը հեղեղում.
Այդ իմ աղի արտասուքն է
Կրծքիս վերքը ողողում։

***

Երբ մեր ազգը՝ բերան արած՝
Կ'երգի սիրոյ երգերը.
Երբ ամեն տեղ երգերիս մէջ
Կը տեսնեն իմ վէրքերը—

Որքան ծանր նախատինքներ
Ու կշտանքանք կը տան քեզ,
Որ իմ սիրտը չլատեցիր
Ու ինձ արիր սիրակէզ։

Եւ ամբոխի կշտաբանքը
Կը մնայ, իբրև մի բողոք,
Երկար դարեր կը մեղադրեն
Գեղեցկու հուզ անողոք։

*
* *

Թող ծանակեն նրաձները
Ու ինձ կոչեն մի գրչակ.
Թող խորտակի քննադատը
Իմ քնարը գրչի տակ։

Թող աշխարհի երգիչները
Ծաղր նիւթեն ինձ համար.
Թող իմ չբկամ ընկերները
Ոտնահարեն անդադար։

Թող ոխերիմ խմբագիրը
Լուսանք թափի իմ գլխին...
Հոգ չէ բնաւ. ես անտարբեր
Կը համբերեմ ամենքին։

Միայն թէ դու չը պարսաւես,
Անանջ դնես երգերիս.
Միայն թէ դու ինձ հասկանաս,
Մի ճար անես վէրքերիս։

*
* *

Հուր-արեգակ, լոյս-արուսեակ,
Դու աննման ալ աղջիկ,
Զարդ ու զարդար, ակունք, գոհար,
Դու իմ անգին լալ-աղջիկ.

Թէ ուզում ես իմ սիրային
Նըւագները ընդհատեմ.
Թէ ուզում ես՝ քեզ յաւիտեան
Արհամարեմ և ատեմ—

Սիրէր դու ինձ, փարուէր կրծքիս,
Որ քեզ այրեմ իմ հրով,
Որ կլանեմ թարմութիւնդ,
Թառամեցնեմ համբոյրով։

Երբ թառամես—էլ չեմ երգիլ,
Քեզ իմ սրտից կը պոկեմ,
Եւ ինձ համար բուրաստանից
Մի նոր ծաղիկ կը ջոկեմ...

———

ՎԱՐԴԱ ՈՒ ԴԱՐԴԱ

Անուշաբոյր ծաղիկներից
Միայն վարդը սիրեցի,
Իմ ցաւագար, տանջւած սրտից
Նորան երգեր ձօնեցի։

Սակայն անգութ, անուշ վարդը
Ականջ չ՚արաւ երգերիս,
Նա չը սփոփեց սրտիս դարդը,
Դարման չ՚արաւ վէրքերիս։

Սիրաբորբոք ու յուսահատ՝
Ես լաց եղայ, ողբացի,
Արցունքներով իմ յորդառատ
Քնքոյշ վարդը թրջեցի...

—Անմիտ երգիչ, ինչ ես լալիս,
Արցունքներով ինձ ցօղում.
Է՞ր ես լալիս ու վայ տալիս,
Սիրտըդ է զուր վրդովում։

Քեզ համար չէ անուշ վարդը,
Քեզ համար չէ նա բացուել.
Ծաղիկների շքեղ զարդը
Քեզ համար չէ փթըթել։

Ինձ կը քաղի մեծատունը
Գոհարներով ու ոսկով,
Ինձ կը տանի նա իր տունը,
Կը պահպանի խնամքով։

Ես կը բազմեմ շքեղազարդ
Ու փառահեղ դահլիճում,
Ես կը ժպտամ ուրախ, զըւարթ
Ոսկեջրած բաժակում։

Շուք ու փայլով շրջապատուած՝
Ես կը հրճուեմ խնդագին,
Իսկ դու, պօէտ, վարդից զրկուած՝
Ի զուր կը լաս ողբագին...

---

* * *

Ծաղկոց մտայ — սիրտըս էրուած,
Եարոտ էր.
Եարոտ սիրտըս ազիզ եարիս
Կարօտ էր։

Ազիզ եարիս ձէն տըւեցի—
Ձէն չը կար,
Ծաղկանց միջին անուշ վարդըս
Էլ չը կար։

Անգուրթ եարըս սրտիս հետը
Խաղ արեց,
Թողեց, գնաց, իմ ջիգեարը
Դաղ արեց։

Երգիչ դարձայ, պտըտեցի
Սար ու քար,
Ձէն տըւեցի — անուշ վարդըս
Էլ չը կար։

Աստուած սիրէք, ասէք՝ եարբս
Ու՞ր գնաց.
Ազիզ եարբս, անուշ վարդբս
Ու՞ր մնաց։

Էն ինչ՞ զուշ է էն ոսկեպատ
Վանդակում,
Էն ինչ՞ վարդ է ոսկեջրած
Բաժակում։

Ա՜խ, էն հիւանդ իմ խեղճ եարն է
Բանտարկուած.
Ա՜խ, էն թշուառ իմ ալ վարդն է
Թառամած։...

ՔՈՍԷՐԸ

Ես չեմ երգում, որ իմ երգով
Ըսքանչանայ աշխարհը,
Որ անթառամ դափնիներով
Պըսակեն իմ քընարը։

Մարդկանց դափնին ու ոլսանան
Զեն բուժիլ իմ ցաւերը.—
Ցաւոտ սրտիս դեղ ու դարման
Կը լինի լոկ քո սէրը։

---

*
* *

Գնաց... Թռաւ ոսկեփետուր
Իմ ղուշը,
Տարաւ հետը գլխիս խելքը
Եւ ուշը։

Էլ երկնքում չը կայ պայծառ
Աստղիկը,
Էլ ծաղկոցում չը կայ անուշ
Ծաղիկը։

Երկինքը մութ, ամպամած է
Ու խաւար.
Ծաղկոցը չոր ու խոպան է
Ինձ համար։

Ա՜խ, ինչ անեմ—իմ ծաղիկը
Քաղւած է.
Մի ճար արէք—սիրտս էրւած,
Դաղւած է։

Լաց եմ լինում, բայց ցամաք են
Աչքերս—
Արցունք չը կայ, որ ամոքեմ
Վշտերս։

ԹՕՇՆԵԾ ՎԱՐԴԸ

Այդ քնարի հնչիւնը չէ
Քեզ կախարդում, հմայում.
Այդ պօէտի երգերը չեն
Լսելիքդ փայփայում։

Կայ քեզ համար մի աւելի
Անուշիկ ձայն դիւթական.
Օ՜, քեզ համար նա բոլորից
Գեղեցիկ է, դուրեկան։

Այդ՝ շողշողուն ոսկիների
Հնչիւններն են քեզ դիւթում.
Գարշ, հրապուրիչ այդ մետաղն է
Խելք ու միտքդ, կաշկանդում։

Հեռու, հեռու, ով նիւթապաշտ,
Ստոր տենչով լցւած կոյս.
Էլ չեմ երգում, էլ ինձանից
Դու մի սպասիր ոչ մի յոյս։

Զքնաղ էիր—այժմ, աւաղ,
Այլանդակ ես ինձ համար.
Դու մի բացւած ալ-վարդ էիր,
Այժմ խսպառ թոշնեցար...

II

Նայիր ահա այն վիթխարի
Աշտարակին ահաւոր—
Խոժոռադէմ կանգնած է այն՝
Իբրև տխուր սգաւոր։
Այնտեղ տխուր նստած է լուռ
Մի աբեղայ դառնացած,
Իր միաբան ընկերներից
Անջատուած ու բաժանուած։
Չէր մասնակից երեկոյեան
Ծամերգութեան տաճարի—
Բազմախորհուրդ նստած է նա
Աշտարակում վիթխարի։
Աղօթք, մաղթանք, ժամերգութիւն
Չէին նորան հրապուրում,—
Նա յուզուած էր և այլայլուած...
Աղօթք անել չէր կարում։

III

Ի՞նչպէս, ի՞նչպէս աղօթք անի
Սրտով յուզուած, վիրաւոր,
Երբ ամեն տեղ լսւում է լաց
Ու հառաչանք բիւրաւոր,

Ի՞նչպէս նստի մենաստանում
Նա անտարբեր ու խաղաղ,
Երբ պարսիկը հիմնայատակ
Կործանում է Ղարաբաղ.
Երբ Փանահ-խան հայ աշխարհի
Սրտում դրած իր լոյնը,
Օձի նման՝ թափում է խեղճ
Հայի գլխին իր թոյնը։
Բաւական է... Էլ չի կարող
Մնալ այստեղ սուրբ հայրը—
Թողնում է նա մենաստանը,
Սրբանըւէր իր վայրը։

IV

«Մնա՛ք բարեաւ, ո՛վ սուրբ տաճար
Եւ Քրիստոսի սուրբ սեղան»,—
Աշտարակը թնդացնելով՝
Գոչեց յուզուած աբեղան.—
«Թո՛ղ այսուհետ՝ սուրբ խաչի տեղ՝
Ձեռիս սուրը շողշողայ,
Իմ մահաբեր, ահեղ սրից
Թո՛ղ թշնամին դողդողայ։
Արիւնավրէժ կրօնաւորիս
Թո՛ղ նախատեն ամենքը—

Ես մինչև մահ ու կախաղան
Էլ չեմ թողնիլ իմ գենքը։
Թող ինձ կոչեն խենթ աբեղայ[1]),
Ինձ ծանակեն աշխարհում —
Պիտի անվերջ արիւն թափեմ
Ռազմի ահեղ դաշտերում։
Էլ այսուհետ՝ չեմ լսելու
Զանգակների զողանջիւն —
Զանգակի տեղ՝ պիտի լսեմ
Հրացանների շառաչիւն։
Սուրբ տաճարի անուշահոտ
Կնդրկի ու խնկի տեղ՝
Լոկ մահաբեր վառոդի հոտ
Պիտի շնչեմ ամեն տեղ։
Ընկերներըս, եղբայրներըս
Կ՚ըլնեն ոչ թէ սուրբ հայրեր,
Այլ ահաւոր և աննկուն
Նիզակակից հայ քաջեր։
Թող իմ վարձը լինի ոչ թէ
Սուրբ օրհնութեան կոնդակը,
Այլ ոխերիմ ու գարշելի
Մեր թշնամու գնդակը...»

V

Կէս գիշերին գեղ լուսինը՝
Ամպերի մէջ լողալով՝
Հանդարտ ու վեհ ընթանում էր,
Արծաթի պէս շողալով։
Շուշայ բարձր, գոռոզ բերդը՝
Մինչև երկինք վերացած՝
Լուսնեակի տակ մրրափում էր,
Հսկայի պէս՝ լուռ կանգնած։
Գարգար գետը բերդի տակին՝
Բարձրամրմունջ վշշալով՝
Ըշտապում էր Թարթարի մօտ,
Քարափները մաշելով։
Քարափները երկու կողմից
Կամարի պէս՝ կըռացել,
Գետի վերայ ապառաժոտ
Կամուրջ[2]) էին կառուցել։

VI

Կամուրջի մօտ կէս գիշերին
Մի վիթխարի ձիաւոր՝
Դաժան դէմքով դիտում էր լուռ
Հսկայ բերդին ահաւոր։

Լուսնեակի տակ շողում էին
Նորա փայլուն զէնքերը.
Ա.հ ու սարսափ էին թափում
Նորա ահեղ աչքերը։
Նա կտրել էր բերդի ճանբան,
Արթուն աչքով միշտ հսկում.
Նորա ահից այն կողմերով
Էլ պարսիկ չէր անց կենում,
Այնտեղ արդէն ճանապարհին՝
Այն սեպացած ժայռի մօտ՝
Թափւած էին պարսիկների
Դիակներըն արիւնոտ։

VII

Շուշւայ բերդում քնած էին
Զօրապետ ու զօրական.
Սակայն այնտեղ իր պալատում
Դեռ արթուն էր Փանահ-խան։
Ողջ գիշերը նստած էր նա—
Քուն չէր գալիս աչքերին.
Այլայլւած էր և անձնատուր
Մռայլ ու սև մտքերին։
Օձի նման՝ ներս սողալով
Հայ աշխարհը որբացած,

Հայ աշխարհի սրտի միջին
Որդնի նման՝ բուն դրած—
Այժմ նստած՝ տանջւում էր նա
Սև մտքերից բիւրաւոր...
Դառը վիշտը կեղեքում էր
Սիրտը յուզւած, վիրաւոր։

VIII

Այդ ի՞նչ ծանր քար էր ճնշում
Խանի սիրտը բարբարոս.
Ո՞վ էր մաշում նորա հոգին
Ամբարտաւան ու գոռոզ։
Այդ քաջ Դալի-Մահրասան էր—
Այն աբեղան ահաւոր,
Որ թուրքերի արեան գետով
Հեղեղում էր սար ու ձոր։
Բերդի տակին, գիշեր-ցերեկ
Կտրած Մազէ-Կամուրջը,
Իր զինակից քաջերի հետ
Ա.հ էր սփռում նա շուրջը։
Այն օրւանից, երբ հեռացաւ
Եղիշէի [3]) սուրբ վանքից,
Սուրը ձեռին՝ քանի՜-քանի՜
Թուրքի զրկեց իր կեանքից։

Քանի՞-քանի՞ պարսիկ զինուոր
Գնդակահար նա արաւ.
Քանի՞ սէյիդ նա կոտորեց
Բանտում սոված ու ծարաւ.
Քանի՞-քանի՞ մօլլա, դէրվիշ
Քաշեց, տարաւ մուրթ ձորը
Ու պատառեց իր կեռ թրով
Նոցա սիրտն ու փորը։
Քանի՞ պարսիկ զօրապետներ
Կախեց ծառին պարանով.
Քանի՞ անգամ Դարդար գետը
Ներկեց կարմիր արիւնով...
Քանի՞ անգամ նորան փորձեց
Կործանելու Փանահ-խան,
Սակայն ի զո՞ւր... Մնաց անյաղթ
Հայոց հզօր աբեղան։

IX

Առաւօտեան, երբ երկինքը
Յուզւած՝ իբրև հրեղէն ծով՝
Դալարազարդ սարի գլխին
Բռընկուեցաւ ալ բոցով—
Մինարէթի գլխից հնչեց
Մուհամէդի ազանը.

Յոգնած՝ չոքեց աղօթելու
Շուշւայ բերդի գազանը։
Աղօթում էր նա Ալլահին,
Որ զօրութիւն տայ իրան՝
Հայոց ազգը կործանելու
Ու ջնջելու յաւիտեան։
Աղօթում էր նա Ալլահին.
Որ երկինքը պստառի
Ու շանթահար անի վերից
Մահրասային քաջարի։

X

Մեծ խորհուրդ կայ այսօր բերդում։
Վշտամոլոր թուրք խանը,
Յենւած փափուկ, թաւշէ բարձին՝
Ծխում էր իր ղալյանը։
Խանի առաջ կանգնած էր մի
Հլու, խոնարհ մանկլաւիկ,
Կրակի համար գօտկի մէջին
Խրած ոսկէ ունելիք։
Ներկայ էին Փանահ-խանի
Զօրքի բոլոր պետերը,
Ներկայ էին պարսից յայտնի
Մօլլաներ, մեծերը.

Խանի կողքին, ծաղկանկար
Գորգի վերայ լուռ բազմած՝
Մտածում էր հայոց Մելիք
Շահնազարը ազգուրաց։

XI

Այն օրանից, երբ Շահնազար
Դաւաճանեց հայ ազգին,
Իր սեփական Շուշայ բերդը
Տըւաւ լպիրշ, ժանտ պարսկին—
Գիշեր-ցերեկ միշտ անձնատուր
Փանահ-խանին ոխերիմ,
Դարձաւ նորա սրտին մօտիկ
Բարեկամը մտերիմ։
Այժմ նստած խանի կողքին՝
Պալատումը փառաւոր.
Հայի համար նա լարում էր
Որոգայթներ նորանոր։
Այնտեղ էր և հայի մատնիչ՝
Խաչէնի զեղխ Միրզախան,
Որին, երբև վարձատրութիւն,
Մելիք կարգեց Փանահ-խան։

XII

Մտածում էր խանը երկար,
Հարցնում խորհուրդ բոլորից—

Ի՞նչպէս Դալի-Մահրասալին
Ջնջի իսպառ աշխարհից։
Խնդրում էր նա իր հնարագէտ
Մօլլաներին սըրամիտ,
Որ հնարքներից հիւսեն ուռկան,
Որսան «հային չարամիտ»։
Խորհուրդ էին անում երկար
Մօլլաներն ու խանը,
Սակայն չէին կարում հիւսել
Մահրասայի ուռկանը.
Խորհուրդ էին անում նոքա,
Երկար տալիս խելք-խելքի,
Բայց խորհուրդը մնում էր միշտ
Դարձեալ առանց մի ելքի։

XIII

«Պարտքիս լինի,—կուրծքը ծեծեց
Շահնազարը դաւաճան.—
Իմ սրբազան պարտքը լինի,
Որ այդ գործին տամ վախճան։
Ամեն հնարք, ամեն միջոց
Գործ կը դնեմ անպատճառ,
Որ գարշելի աբեղային
Ինքիս պատժեմ չարաչար։

Մեր աշխարհի հզօր խանը
Թո՛ղ լինի ողջ, անսասան.
Ես չեմ թողնել, որ կենդանի
Մնայ լպիրշ Մահրասան։
Դուք ամենքդ հանգիստ կացէք,
Անհոգ կացէք ու խաղաղ.
Ամեն բան իմ ձեռքիս կը գայ,
Վրկայ է ողջ Ղարաբաղ։
«Ես այն Մելիք-Շահնազարն եմ,
Որ իր սրով ահաւոր
Իշխեց ամբողջ Վարանդային
Ու նըւաճեց սար ու ձոր։
Ես այն Մելիք-Շահնազարն եմ,
Որի բերդին անառիկ
Չէ յանդգնում մերձանալու
Խամսայի ոչ մի մելիք։
Ես այն Մելիք-Շահնազարն եմ,
Որից ոչ թէ աբեղայ,
Այլ մեր ամբողջ հայոց ազգը
Կը սարսափի, կը դողայ։
Այնպէս ջարդեմ, այնպէս փշրեմ
Մահրասայի պօպոզը,
Որ աշխարհից անհետանայ
Նորա իզուն ու թոզը...»

XIV

—«Ա՜յ մաշալլա, այ աֆարըմ
Մեր քաջ Մելիք-Շահնազար,
Գոչեց խանը.— չը կայ ոչ ոք,
Որ քեզ լինի հաւասար.
Ո՛չ Իրանում, ո՛չ Թուրանում
Իգիթ չը կայ քեզ նման։
Սաղ աշխարհի իգիթները
Թո՛ղ նախանձեն քո անուան։
Այն օրուանից, երբոր դարձար
Իմ ջուխտ աչքի դու լոյսը—
Քեզ վերայ է եղել միայն
Սրտիս բոլոր իմ լոյսը։
Հայ տեղովըդ դու եղել ես
Իմ աջ թևը ամեն օր.
Միշտ եղել ես դու թուրքերիս
Բարեկամը մերձաւոր»։

XV

Պըլը-Պուղին [4]), Շահնազարի
Խեղկատակը սիրելի,
Կանգնած էր լուռ, իբրև զագիր
Ու սև գործի հայելի։

Էլ չը կարաց իրան զսպել
Խեղկատակը դառնացած.
Նա հեգնօրէն, տխուր ժպտաց,
Առաջ գնաց և.ասաց.
«Երգւում եմ ես մեր մելիքի
Քաջալ գլխի կատարով,
Երգւում եմ ես այս ժողովի
Շարժառիթով, պատճառով,
Որ մեր կեանքում միշտ հերոս են
Հանդիսանում մկները.
Որ ամեն տեղ միշտ գլխից են
Հոտում բոլոր ձկները։
Եթէ մի ձուկ հաւատարիմ
Չէ իր եղբայր ձկներին,
Նա կարող է հաւատարիմ
Լինել օտար մկներին։
Եթէ մէկը ինքըն իրան
Չէ բարեկամ մերձաւոր,
Մթէ կըլնի նա բարեկամ
Օտարներին կեղծաւոր։
Ասում են, որ շունը շան միս
Չէ ճաշակում ընաւին,
Սակայն հայը ախորժակով
Ուտում միշտ է իր հային։

Մելիք, թէև դու խեղճ Պուղուս
Անւանում ես խենթ ու ալէլ,
Բայց տեսնում եմ, որ պէլերի
Թագաւորն ես դու եղել...»

XVI

Խորհրդաւոր խոր լռութիւն
Տիրեց անբողջ պալատում.
Փանահ խանը զգաց թախիծ
Ու դառը վիշտ իր սրտում։
Ցնցւեց Մելիք-Շահնազարը
Պըլը-Պուղուս խօսքերից.
Սիրտը կարծես՝ խոցւեց դաժան
Ու թունաւոր նետերից։
Մօլլաներըն ու մեծերը
Նայում էին շըւարած,
Դողդոջ ձեռքով շփում կարմիր
Մօրուսները հինայած։
Եւ կատաղած Շահնազարը՝
Շրթունքները կրծելով՝
Դուրս վազեցեց խեղկատակին,
Բերանից փրփուր թափելով։

XVII

Դարձեալ գիշեր, մութ գիշեր.
Ամեն տեղ մութ ու խաւար.
Խաւարի մէջ խորասուզուած՝
Քնած է լուռ ողջ աշխարհ։
Երկնակամարն Արմենիայի
Ծածկուած է մութ, սև քօղով—
Լուսին չը կայ, որ գեղադէմ
Ծպտայ վերից իր շողով։
Խօլ խաւարում՝ հսկայի պէս՝
Ծեր Մասիսն ալևոր
Ամպի տակին կանգնած է լուռ,
Իբրև տխուր սգաւոր։
Մայր Արարատեան
Թանձր մշուշ է տիրում.
Գմբէթները սուրբ տաճարի
Սևացել են խաւարում։

XVIII

Ո՞վ է այն հեգ բանտարկեալը,
Այն թշուառը վիրաւոր,
Որ դառնագին հառաչանքով
Թնդացնում է սար ու ձոր։

Ո՞վ է լալիս ու ողբակում
Ազատութեան ծարաւով,
Խորհրդաւոր լռութիւնը
Այնպէս խախտում գիշերով։
Գուցէ Հայոց Արտաւազդն է
Մասիս լեռան անդնդում,
Շղթայակապ և յուսահատ,
Քաջքերի մօտ հեծկլտում։
Կամ Վրաստանի Ամիրանն է՝
Կապանքներով կաշկանդուած՝
Անվերջ լալիս սրտամորմոք,
Մութ քարայրում բանտարկուած։
Կամ թէ դժբաղդ Պրոմեթէյն է
Ժայռին մեխուած հառաչում.
Թէ Շիլիոնի թշուառ զոհն է
Բանտի միջին տառապում։
Ո՛չ... Այդ Հայոց Մահրասան է,
Այն աբեղան քաջազօր,
Որից թուրքը սարսափում էր,
Սարսափում էր սար ու ձոր։
Վագրի նման՝ քաջ Մահրասան
Բանտարկուած է վանդակում,
Ազատութեան տենչով լցուած՝
Տառապում է մութ բանտում։

Գիշեր-ցերեկ տանջուում է նա,
Սիրտը բեկուած ու ցաւոտ,
Խարխափում է սև խաւարում,
Պայծառ լոյսին միշտ կարօտ...

XIX

Ո՞վ յանդգնեց մերձենալու
Մահրասային անվեհեր.
Ո՞վ յանդգնեց նորա ձեռից
Խլել սուրը մահաբեր։
Մի՞թէ գոռոզ Շահնազարն է
Իր խոտումը կատարել.
Թէ պարսիկն է քաջի գլխին
Լոյս երկինքը սևացրել։
Ո՛չ։ Շահնազարն ու պարսիկը
Անկարող են և անզօր,
Անկարող են նոքա ընկճել
Աբեղային քաջազօր։
Կայ աւելի բարձր մի ոյժ,
Մի ոյժ հզօր, անոսան,
Որի առաջ խոնարհուել է
Մեր աննկուն Մահրասան։
Օ՜, այդ ոյժը սուրբ է, վսեմ,
Անպարտելի ու հզօր.
Այդ ոյժին է դիմել մատնիչ

Շահնազարը նենգաւոր։
Այդ — մեր Հայոց Եկեղեցու
Սուրբ օրէնքն է մոլեռանդ,
Այն օրէնքը, որ արել է
Մեր աշխարհը քարուքանդ։
Եկեղեցին չէ թոյլ տալիս
Արիւն թափել, ըսպանել —
Պատերազմ է՝ դէպ՝ թշնամին
Ներողամիտ միշտ լինել։
Բայց ոտնատակ տրուաւ այդ սուրբը
Պատերազմը Մահրասան.
Նա արիւնով ներկեց աշխարհ,
Դարձաւ ահեղ մարդասպան։

XX

Եւ հայ ազգի Հովսեպեանը [5])
Սուրբ Միածնայ Տաճարի
Բանտարկեալ է արիւնավրէժ
Մահրասային քաջարի.
Հայրենիքի սուրբ պաշտպանին
Մեղադրեալ է նա այսօր.
Քաջ Մահրասան բանտարկուած է,
Իբրև ըմբոստ յանցաւոր...
Բանտարկուած է Մայր Աթոռի

Սառցատանը մութ, խաւար.
Յուրտ ու խոնաւ իր բանտի մէջ
Տառապում է վշտահար։
Թո՛ղ տառապի, ապաշխարի,
Աղօթք անի ու տանջւի.
Իսկ աշխարհը թուրքի ձեռքով
Թո՛ղ աւերւի՜ ու քանդւի՜...

XXI

Մայր Աթոռը պաշարուած էր։
Արիւնարբու քրդերը [6])
Գազանաբար խորտակում են
Մենաստանի դռները։
Ձիչ, աղաղակ, զէնքի շաչիւն
Թնդացնում են աշխարհը.
Արձագանք է տալիս հեռւից
Մասիս լեռան կատարը։
Վառօդի սև, թանձր ծուխը
Մինչ երկինք է վերանում,
Ամպի նման՝ արեգակի
Պայծառ լոյսը խափանում։
Մենաստանի թուանքչիները
Պարիսպների վերևից
Ձիգ են թափում վանքը փրկել
Դաժան, ահեղ քրդերից։

XXII

Տաճնապի մէջ ծերունազարդ
Հայրապետը Վեհափառ
Աղօթում է, որ պահպանի
Աստուած Գահը մեր թշւառ.
Նա ձեռները երկինք պարզած՝
Աղօթում է ծնկաչոք,
Որ Տէր Աստուած վանքը փրկի
Ոսոխներից անողոք։
Սակայն իզո՛ւր... Նայէ՛ր, ահա
Արիւնարբու քրդերը
Կոտրտում են մենաստանի
Հսկայական դռները.
Խորտակեցէ՛ն, ներս խուժեցէ՛ն...
Ահա վանքը սրբազան
Աւերում է պիղծ թշնամին,
Իբրև վայրագ, չար գազան...

XXIII

Քաջ Մահրատան էլ չի կարող
Մնալ անձուկ իր բանտում—
Մռնչում է, իբրև ագուռ
Իր երկաթէ վանդակում։

Մութ կամարը տատանելով՝
Մռնչում է անհամբեր.
Բորբոքւում է ու բաբախում
Նորա սիրտըն անվեհեր։
Զէնքե՛ր տըւէք, նժոյգ տըւէք
Մահրասային քաջարի.
Տէս, խնդրում է, նա ուզում է
Թշնամու դէմ մաքառի։
Հասէր, հասէր, քաջ Մահրասա՛,
Բանտի դուռը խորտակէր,
Լուսաւորչի սուրբ Աթոռը
Ե՛կ ազատէր ու փրկէր...

XXIV

Այն ի՞նչ ահեղ շանթեր ընկան
Խաւարամած երկնքից.
Այն ի՞նչ հսկայ լեռը փլեց
Քրդի գլխին վերևից։
Մահրասա՛ն է... Ամպերի պէս՝
Որոտաձայն գոռալով,
Կոտորում է նա քրդերին՝
Ահ ու սարսափ սփռելով։
Գիշերային կայծակի պէս՝
Շողշողում են զէնքերը,

Աշնանային տերևի պէս՝
Վայր են ընկնում քրդերը։
Պիղծ թշնամին արիւնշաղախ՝
Տապալւում է, հառաչում.
Պիղծ թշնամին սարսափահար
Նահանջում է ու փախչում...

XXV

Անցաւ արդէն ճգնաժամը։
Մայր Աթոռը ազատւեց։
Մենաստանում ամեն կողմից
Աւետաբեր ձայն հնչեց։
Երկնակամարն ազատւեցաւ
Մռայլ ու սև ամպերից,
Արեգակը նորից պայծառ՝
Ուրախ շողաց ելթերից։
Եւ վանական եղբայրները
Ահա եկան, ժողւեցին,
Քաջահզօր Մահրասային
Օրհնեցին ու գովեցին։
Իսկոյն նոքա քաջի համար
Սարքեցին տօն փառաւոր,
Ովսաննայով, եցցէներով
Դղրդացրին սար ու ձոր։

XXVI

Աստուածարեալ Հայրապետը
Սուրբ պատարագ մատուցեց,
Անհուն սիրով Մահրասայի
Լայն ճակատը համբուրեց.
«Այս օրանից դու ազատ ես.
Գնա, որդեակ, մաքառիր.
Ժայռի նման՝ կուրծքիդ դէմ տուր,
Հայրենիքիդ պաշտպանիր։
Ես տեսնում եմ, որ Աստուած է
Քեզ ուղարկել հայի մօտ,
Որ բժշկես նորա ցաւը
Եւ վէրքերին արիւնոտ։
Աստուած թուրիդ ամէն կուրում
Անի կորուկ, զօրաւոր.
Աստուած տայ ոյժ բազուկներիդ,
Որ միշտ լինես քաջագօր։
Ինչպէս այսօր դու փրկեցիր
Սուրբ Աթոռը քրդերից,
Այնպէս էլ թող Տէրը փրկի
Քեզ քո արած մեղքերից։
Մի ձեռիդ սուր, միւս ձեռիդ խաչ՝
Գնա, կուիր համարձակ.

Թու լամորթին քաջ գործերիդ
Թող միշտ լինին օրինակ։
Հայրենիքի դաւաճանը
Թող քեզ տեսնի, ամաչի.
Քեզ տեսնելով՝ մեր թշնամին
Հային թող լաւ ճանաչի։
Թող այսուհետ անմահացնի
Քեզ մայրենի աշխարհը.
Թող քեզ գովի, փառաբանի՝
Բանաստեղծի քընարը...»

XXVII

Իբրև յոգնած և ուժասպառ
Մի հալածած չար գազան՝
Ռակմի դաշտից՝ կաղթահարած
Փախչում էր նենգ Փանահ-խան։
Յուսահատած՝ նա փախչում էր
Գարգար գետի եզերքով.
Նա փախչում էր, իր նժոյգի
Մէջքը դաղում մտրակով.
Փռնչալով՝ սլանում է
Խեղճ նժոյգը քրթնաթոր,
Սլանում է նա անդադար,
Անցնում լեռներ, դաշտ ու ձոր։

Խանը մենակ ու սարսափած՝
Սըլանում էր Պարսկաստան,
Որ իր կեանքը փրկի մահից,
Գտնի այնտեղ ապաստան։

XXVIII

Վարանդայում, Ասկարանի
Քանդուած, աւեր քերդի մօտ
Թափթփուած են պարսիկների
Դիակները արիւնոտ։
Գարգար գետի ժեռոտ ափը
Ողողուած է արիւնով.
Շուրջը թնդում, դղրդում է
Խառնիճաղանճ ձայներով։
Խռնըւում են վրացի, խևսուր,
Օս զօրքերը լեռնական,
Որոնց արքայ Թէյմուրազը
Բերել էր մեզ օգնութեան։
Այստեղ են մեր հսկայատիպ
Հերոսները յաղթանդամ.
Այստեղ են հայ իշխանները՝
Մելիք-Իսրուփ և Ամրամ՝)։

XXIX

Ամենեքեան միահամուռ
Խորտակել են թուրքերին.
Այժմ նոքա հանուր ուժով
Որոնում են Փանահին։
Բայց Փանահը սարսափահար՝
Փախուստ տալով մահուանից,
Արդէն վաղուց հեռացել էր
Վարանդայի սահմանից։
Հաւատարիմ իր նժոյգին
Մտրակելով անդադար,
Հասել էր նա Մայր Արաքսի
Ափերը գեղ ու դալար։
Յոգնած խանը մօտեցել էր
Խուդափիրին կամուրջին,
Երբ յետևից յանկարծ հնչեց
Մի ձայն ահեղ և ուժգին։

XXX

Եւ այդ ծանօթ, հուժկու ձայնից
Ցնցուեց խանը սարսափած.
Սանձը ձեռքից նա բաց թողեց,
Տերևի պէս դողդողաց։

Եւ երկաթէ հզօր մի ձեռք
Յանկարծ բռնեց Փանահին,
Տաշեղի պէս՝ նետից հեռու,
Զարկեց գետնի քարերին։
Նա վիրաւոր և ուժասպառ՝
Ուժգին ճչաց, հառաչեց,
Թաւագլոր փուլեց գետին,
Հոգւոց հանեց ու լռեց...
Երբ կիսամեռ խանը նորից
Բացաւ պղտոր աչքերը,
Տեսաւ կապած շղթաներով
Իր ոտներն ու ձեռքերը։

XXXI

Նորա առաջ հսկայի պէս՝
Պարթևհասակ, անատան՝
Ընկերների հետ միասին
Կանգնած էր քաջ Մահրասան,
Գլխին դրած մորթէ գլխարկ,
Սև փարաջան ծալած յետ,
Կողքին կախած իր վեղարը՝
Կանգնած էր նա խմբի հետ։
Ասպաւազէն, խոժոռադէմ՝
Կանգնած էր նա անվեհեր.

Նորա տեսքից սոսկում էին
Դաշտեր, ձորեր ու լեռներ։
Արաքս գետը՝ յորձանք տալով՝
Կամուրջի տակ հոսում էր,
Կարծես՝ Դալի-Մահրասայի
Գովքը պատմում, խօսում էր։

XXXII

Եւ Մահրասան հեծաւ կայտառ
Իր մոխրագոյն նժոյգ ձին
Ու Վարանդա տարաւ իր հետ
Շղթայակապ Փանահին։
Տարաւ Նորան հայի ահեղ
Պատասխանին յանձնելու,
Տարաւ իր հետ հայի մաղձը
Նորա գլխին թափելու։
Ճանապարհին յոգնած խանը
Հառաչում էր ու լալիս,
Սակայն ոչ ոք ազատելու
Եւ օգնութեան չէր գալիս.
Նորա երկու բարեկամը՝
Շահնազար ու Միրզախան
Փախել էին ու Զանգեզուր [8])
Բերդում գտել ապաստան։—

XXXIII

Բայց Շահնազար ու Միրզախան
Զը մնացին ապահով.
Շուտով նոքա՝ խանի նման՝
Կապկպեցին շղթայով։
Ղարաբաղի երեք դաժան
Հերետիկներին ահաւոր
Այժմ գերել, շղթայել են
Հայերը քաջ և հզօր։
Ուրախութեան աղաղակով
Դղրդում են լեռները,
Դղրդում են Ղարաբաղի
Անտառները, ձորերը։
Ամենայն տեղ խինդ ու բերկրանք,
Նրուագարան ու տաղեր.
Ամենայն տեղ բուռն հրճուանք,
Պար ու ծիծաղ և խաղեր...

XXXIV

Բայց... ծիծաղը լացի փոխուեց,
Իսկ երգերը—վերքերի.
Խնդութիւնը շուտ դադարեց,
Մնաց կիսատ ու թերի.—

Շղթայակապ մատնիչները
Ու գարշելի Փանահ-խան
Յանկարծակի ազատուել են
Շղթաներից գերութեան։
Ազատուել են կապանքներից
Ոչ սեփական ուժերով,
Այլ Վրաստանի նենգ, ընչաքաղց
Թէյմուրազի ձեռներով։
Հայոց ազգի դաշնակիցը
Դաւաճանեց հայ ազգին,
Քակտեց կապը սուրբ միութեան,
Երկերը պագեց կաշառքին [9])։

XXXV

Աւաղ... Ինչու, ինչու հզօր
Եւ քաջարի Մահրասան
Պատառ-պատառ չարաւ խանին
Իր կեռ թրով անսասան.
Ինչու նորան նա չբսպանեց
Արաքս գետի ափի մօտ
Ու չը նետեց պղտոր ջուրը
Գարշ դիակն արիւնոտ.
Մելիք-Իսուփն ու Ամամը
Ինչու իրանց ոսոխին

Արծաթապաշտ և ուխտադրուժ
Թէյմուրազի մօտ թողին։
Այժմ երեք արիւնալբու
Գազանները վայրենի
Գնացէ՛ն դարձեալ աւերելու
Մեր Աշխարհը մայրենի...

XXXVI

Օ՜, սև ամպե՛ր, քանի՞ ծածկէք
Դուք երկնքի կամարը.
Քանի՞ անգամ խաւարեցնէք
Դուք Ղարաբաղ աշխարհը։
Հէնց ուզում է արեգակը
Թափել վերից շողերը,
Իր շողերով ոսկեզօծել
Հայ աշխարհի հողերը—
Ամեն կողմից իսկոյն գալիս,
Կուտակւում էք միասին,
Սփռում նորից մռայլ քօղը
Պայծառ ջահի երեսին։
Սիւնեաց երկի՛նք, աշնան երկի՛նք,
Փոփոխակա՛ն ես դու միշտ.
Մերթ բերում ես մեզ ուրախ օր,
Մերթ տխրութիւն, ցաւ ու վիշտ։

XXXVII

Կէս գիշերին գեղ լուսինը
Լող էր տալիս երկնքում,
Տխուր նայում դէպի աշխարհ
Ու ինքն իրան մորմոքւում.
Մերթ պահւում էր ամպերի տակ
Նա սարսափով ու դողով,
Մերթ ամպերից դուրս էր լողում,
Կրկին փայլում իր շողով։
Գանձակի մօտ լեզգիների [10])
Դիակներ են թափթփած.
Դիակների մէջ անվեհեր
Մահրաւան է լուռ նստած։
Նա յոգնած էր պատերազմից,
Իսպառ տխուր ու մոլոր.
Քաջի սիրտը կեղեքում էր
Մի զգացիունք ահաւոր։

XXXVIII

Գերեզմանի սառը քարին
Նստած է նա միայնակ,
Նստած է լուռ, հանգստանում,
Շուրջը արիւն ու դիակ։

Դաժան մահը, իբրև սառած
Դիակների պահապան,
Կանգնած էր լուռ կէս գիշերին
Ահեղ դաշտում ռազմական։
Զարհուրանքը, իբրև անխօս
Մի ուրուական դժնդակ,
Մեռելների միջին հանդարտ
Թափառում էր լուսնի տակ։
Տերևախիտ սօսիները
Սառը քամուց շշնջում,
Մի սոսկալի, սրտաճմլիկ
Դէպք են կարծես գուշակում։

XXXIX

Ահա յանկարծ արիւնշաղախ
Ու յօշոտած մի դիակ,
Աչքը բացաւ անթարթ նայեց
Մահրասային դժնդակ։
Քաջը նստած՝ խոժոռադէմ
Նայում էր ցած գլխակոր,
Կարծես՝ վերից դիտում էր իր
Գերեզմանը ահաւոր։
Եւ ուժասպառ լեզուին՝ տանջուած
Իր մրմնջող վերքերից՝

Վերջին ոյժը հաւաքելով,
Հանդարտ շարժուեց իր տեղից.
Գաղտնագողի ու նենգաբէն
Հեռուից նայեց դալկացած.
Եւ նորա թոյլ ձեռքին յանկարծ
Ատրճանակն որոտաց...

XL

Եւ անողոք, օրհասական
Կապարը սև, մահաբեր
Խրեց Դալի-Մահրասայի
Ժեռոտ կուրծքն անվեհեր...
Գնդակահար առիւծի պէս՝
Նա դառնագին մռնչաց
Եւ՝ խորտակուող սարի նման՝
Գլորուեցաւ դէպի ցած։
Մեռաւ քաջը... Խլեց, տարաւ,
Տարաւ անգութ սև մահը.
Խաւարեցաւ հայ աշխարհի
Պայծառ լոյսն ու ջահը.
Քանդուեց, ընկաւ վշտի ծովը
Մեր փրկութեան փարոսը.
Ննջեց առմիշտ, լռեց յաւէտ
Հայրենիքի հերոսը... [11])

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Խենթ կամ գիժ աբեղայ թուրքերէն՝ Դալի-Մահրասա: Սորա իսկական անունը Աւագ վարդապետ էր, բայց ժողովուրդը տաւ գիժ մականունը։ Հին ժամանակներում այս մականունը տալիս էին քաջ հերոսներին։

2) Մաղէ-Կամուրջը՝ Հուշլայ մօտ։

3) Ղարաբաղի Ջրաբերդ գաւառում։

4) Պըլը-Պուղի=Պէլ Պուղի, որ նշանակում է խենթ Պօղոս: Այդպէս էր կոչում Մելիք-Հայդաղարը իր զարձաբանին։

5) Սիմէօն կաթողիկոս։

6) Ջալալի քրդերը։

7) Գիւլիստանի Մելիք-Իւսուփը և Ջրաբերդի Մելիք-Աթամը միացել էին վրաց Թէյմուրազ թագաւորի հետ և ընդհանուր ուժով ուզում էին ոչնչացնել Փանահ-խանի զօրութիւնը։ Բոլոր կռիւների ժամանակ հայ մելիքները հոգում էին իրանց դաշնակցի պիտոյքները և մատակարարում նորա վրացի, խեսուր և օս զօրքերի խառնիճաղանճ բազմութեան բոլոր պաշարեղէնները։

8) Զանախչին կամ Աւետարանոցը Վարանդայի գլխաւոր բերդաւանն էր։ Առաջ այստեղ էր կենտրոնացած գաւառի իշխանութիւնը։ Բայց յետոյ Փանահ-

խան, Զանախչու դիրքը պաշտպանութեան համար դժնելով անյարմար, խորհուրդ տաւ Մելիք-Հայնազարին հիմնել Հուշլայ բերդը։ Այնուհետև Հուշին դարձաւ Վարանդայի իշխանութեան և պաշտպանութեան կենտրոնը։ Գարգար գետի մօտ կատարուած ճակատամարտում Փանահ-խանի զօրքերը յարդուում են, ինքը փախչում է դէպի Պարսկաստան իսկ Մելիք-Հայնազարը և Խաչէնի Մելիք-Միրզախանը՝ երբև Փանահ-խանի դաշնակիցներ, յաղթութիւնից յետոյ փախչում են Զանախչու բերդը և այնտեղ ամրանում։ Հայոց և վրաց միացած զօրքերը յարձակւում են Զանախչու վերայ, բերդը աւերում և Հայնազարին ու Միրզախանին գերի առնում։

9) Մելիք-Իւսուփն ու Մելիք-Աթամը պատերազմից առաջ պայման էին կապել վրաց Թէյմուրազ թագաւորի հետ, որ սա միայն բաւականար պատերազմական աւարով. իսկ Փանահ-խանը, Մելիք-Հայնազարը և Մելիք-Միրզախանը, ըստ պայմանին, պիտի յանձնէին հայերի ձեռքը։ Սակայն պատերազմից յետոյ, Թէյմուրազը վանական պատրուակներով յետաձգում էր այդ երեք չարագործին հայերի ձեռքը յանձնելը, չը նայելով, որ փախստական Փանահ-խանին Դալի-Մահրասան էր բռնել կէս ճանապարհին և կրկին բերել Վարանդա։ Ուխտադրուժ Թէյմուրազը, քանդելով հայերի հետ կապած պայմանը, գերուած Փանային, Հայնազարին ու Միրզախանին տարաւ իր հետ մինչև Գանձակի կողմերը և նոցանից մեծ փրկանք ստանալով, ազատեց գերութիւնից։

10) Երբ 1796 թուին, Գանձակը պաշարել էին վրաց Հերակլ թագաւորը և Փանահ-խանի որդի Իբրահիմ-խանը (այդ ժամանակ Փանահը սպանուած էր Պարսկաստանում և նորա տեղը Ղարաբաղում բռնել էր որդին), նորանց օգնութեան էր եկել և Ա-ւարիայի Օմար-խանը իր լեզգիներով։

11) Գանձակի պաշարուած բերդումն էին գտնուում տեղային հայասէր Ջաւատ-խանը և նորա մտերիմ՝ հայոց Մելիք-Մէժլումը իր երկու քաջերի՝ Դալի-Մահրասայի և Թիւլի-Արզումանի հետ միասին։ Դալի-Մահրասան լեզգիների դէմ էր կուում, իսկ Թիւլի-Արզումանը՝ վրացիների դէմ։ Սոքա յաճախ իրանց զինակիցների հետ միասին դուրս էին գալիս պաշարուած բերդից, կայծակի նման՝ նետում թշնամիների վերայ, նրանց ջարդում և կրկին վերադառնում բերդը։ Մի այդպիսի յանդուգն յարձակումից յետոյ, երբ անզգոյշ Դալի-Մահրասան յոգնած նստած էր զիշերով իր ձեռքով սպանուած լեզգիների դիակների մէջ՝ և հանգստանում, մի կիսաշունչ լեզգի յանկարծ ատրճանակով զարկեց և սպանեց նորան։ Դալի-Մահրասան սպանուեց Գանձակի գերեզմանատան մէջ և թաղուեցաւ այդ քաղաքի Մայր եկեղեցու գաւթում։

Ց. Թ.

ՅԱՆԿ

	Երես
Օ՜, խնդրում եմ, մի՛ նորոգիր	3
Քեզ ի՞նչ օգուտ	4
Բանաստեղծը	5
Արդեօք ի՞նչ փոյթ ուրիշներին	6
Ինչպէս որ իմ անուշ վարդը	7
Մարգարէ չեմ—գուշակում եմ	8
Աղաչում եմ	9
Մի հրաշքով	10
Մի՛ զարմանար	11
Դո՛ւք	12
Նա որին մենք նէ ենք ասում	13
Երբ լուսինը գեղածիծաղ	14
Գեղեցկուհի՛	15
Երբ ժպտում էր ուրախ, գարթ	16
Տիկինները, օրիորդները	17
Թո՛ղ թառամեն	18
Օ՜, երկնքի մռայլ ամպեր	19
Երնէ՜կ կուրծքս մի լեռ լինէր	20
Իմ հարազատ հէգ եղբայրը	21
Ա՜խ, մինչև ե՞րբ թողնես դու ինձ	22
Արեգակի ջերմութիւնից	23
Այն օրանից	24
«Ասա՛, պօէ՛տ»	25
«Բաւական է, լռի՛ր, երգի՛չ	26

Թէպէտ երգս բարձրալուր է 27
Կուրծքս մաշող, սիրտս այրող 28
Մռայլ խաւար ամպերը չեն 29
Երբ մեր ազգը 30
Թող ծանակեն նւազներս 31
Հուր-արեգակ, լոյս-արուսեակ 32
Վարդա ու դարդս 33
Ծաղկոց մտայ 35
Քո սէրը 37
Գնաց... Թռաւ 38
Թոշնած վարդը 39
Աւերակների մէջ 40
Դալի-Մահրասա 41
Ծանօթութիւններ 76

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Պետական Գրադարան
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Երևան, Մասիսյան
1922

ՀՀ Ազգային գրադարան
NL0339931

31982